

«ՓՅՈՒՆԻԿ ՖԱ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փյունիկ ՖԱ» Հասարակական Կազմակերպության Ժողովին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Փյունիկ ՖԱ» Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Շեղք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Հայկ Մարգարյան

ՌԻՈՎԱՆՆԱԿ ԲԱՊԱՅԱՆ

«Թրասթ Առևրհտ» ՓԲԸ

«Փյունիկ ՖԱ» Հասարակական Կազմակերպություն
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	24,362	27,571
Այլ դեբիտորական պարտքեր	5	76,954	8,095
Տրված փոխառություններ	6	581,462	1,321,300
Պաշարներ	7	12,451	366
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		695,229	1,357,332
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	8	308,590	191,942
Ոչ նյութական ակտիվներ		2	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		308,592	191,942
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,003,821	1,549,274
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Եկամուտների վերաբերող շնորհներ	9	-	1,012
Վարկեր և փոխառություններ	10	11,500	-
Այլ կրեդիտորական պարտքեր		2,185	1,060
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		13,685	2,072
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	168,868	191,195
Վարկեր և փոխառություններ	10	-	46,231
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		168,868	237,426
<i>Զուտ ակտիվներ</i>			
Կուտակված շահույթ		821,268	1,309,776
Ընդամենը զուտ ակտիվներ		821,268	1,309,776
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		1,003,821	1,549,274

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. ապրիլի 5-ին:

Տիգրան Մարտիրոսյան
Տնօրեն



Նվարդ Կարապետյան
Ֆինանսական պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Փյունիկ ՖԱ» Հասարակական Կազմակերպություն
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ			
Հեռարձակման և այլ թույլտվություններ		15,751	-
Ընդամենը հասույթ		15,751	-
Եկամուտներ			
Եկամուտներ հովանավորչությունից և գովազդից		-	137,725
Եկամուտներ ֆուտբոլիստների համերաշխության վճարներից		24,473	-
Եկամուտներ համերաշխության վճարներից-ՈւԵՖԱ		449,688	23,222
Գործառնական այլ եկամուտներ	11	232,097	46,256
Ընդամենը եկամուտներ		706,258	207,203
Ծախսեր			
Ֆուտբոլիստներին վճարվող աշխատավարձ և այլ եկամուտներ		(414,403)	(71,993)
Աշխատակիցների աշխատավարձի գծով ծախսեր		(36,643)	(23,737)
Մաշվածություն և ամորտիզացիա		(24,317)	(22,841)
Հյուրանոցային ծախսեր		(208,330)	(40,037)
Ավիատոմսերի գծով ծախսեր		(102,752)	(21,746)
Մարզիչի և այլ սպասարկման ծախսեր		(229,323)	(59,349)
Մարզումային, արտահագուստի և այլ պարագաների գծով ծախսեր		(43,348)	(39,802)
Մասնակցության մուտքավճարներ		(5,240)	(5,000)
Վիճակագրական հաշվետվությունների գծով ծախսեր		(6,422)	(5,202)
Գործառնական այլ ծախսեր	12	(124,405)	(13,159)
Ընդամենը ծախսեր		(1,195,183)	(302,866)
Գործառնական վնաս		(473,174)	(95,663)
Ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերում և օտարում			
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր		-	(1,620)
Ֆուտբոլիստների գրանցման օտարումներից եկամուտներ		2,020	255
Ընդամենը ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերում և օտարում		2,020	(1,365)
Հիմնական միջոցների օտարումից օգուտ		3,074	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ		3,074	-
Ֆինանսական եկամուտ	13	-	14,502
Ֆինանսական ծախս	13	(11,779)	(2,676)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս/(օգուտ)	14	(8,649)	24,310
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)		(20,428)	36,136
Զուտ վնաս մինչև հարկումը		(488,508)	(60,892)
Տարվա վնաս		(488,508)	(60,892)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք		(488,508)	(60,892)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Փյունիկ ՖԱ» Հասարակական Կազմակերպություն
 Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կուտակված շահույթ	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	1,370,668	1,370,668
Տարվա վնաս	(60,892)	(60,892)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(60,892)	(60,892)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,309,776	1,309,776
Տարվա վնաս	(488,508)	(488,508)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(488,508)	(488,508)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	821,268	821,268

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
 բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Փյունիկ ՖԱ» Հասարակական Կազմակերպություն
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Անհատույց ստացված գումարներ	440,474	23,363
Ֆուտբոլիստների համերաշխության վճարներից մուտքեր	-	348,944
Համերաշխության վճարներից մուտքեր-ՈւԵՖԱ	24,280	23,072
Դրամաշնորհներից մուտքեր	259,212	24,660
Ծառայությունների մատուցումից մուտքեր	15,591	-
Մարզումային փոխհատուցման գումարների մուտք	2,020	-
Առհաշիվ գումարների վերադարձ	2,555	-
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր	3,386	91
Շահառուներին անհատույց տրված գումարներ	(502,690)	-
Վճարումներ մատակարարներին	(642,779)	(180,252)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(53,078)	(94,770)
Վճարումներ բյուջե	(4,105)	(4,373)
Մրցավար, դեղին քարտ և մասնակցություն, վերահայտավորում	(11,228)	(5,790)
Գործառնական գործունեությունից այլ ելքեր	(31,808)	(1,760)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(498,170)	133,185
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆուտբոլիստների գրանցման օտարումից մուտքեր	-	255
Վճարումներ ֆուտբոլիստների գրանցումներ ձեռքբերելու նպատակով	(2,960)	(1,620)
Վճարումներ հիմնական միջոցներ ձեռքբերելու և կառուցելու դիմաց	(141,140)	(1,142)
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	3,160	-
Փոխառության տրամադրում կապակցված կոդներին	(239,400)	-
Փոխառության տրամադրում	-	(312,000)
Փոխառության վերադարձ կապակցված կոդներից	865,538	20,000
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	485,198	(294,507)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	18,900	166,612
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	(7,400)	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	11,500	166,612
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	(1,472)	5,290
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,571	20,820
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(1,737)	1,461
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,362	27,571

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ